


ք. Երևան

20.12.2019թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 03/14.2/2646-19, ՀՀ բնապահպանության 4/02.2/40362-19, ՀՀ գյուղատնտեսության ԳՊ/ԱԲ-1/2313-19, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 02/16.3/3720-19, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 05/14.1/5549-19, նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության 22.1SU/[131209]-19, Քաղաքաշինության կոմիտեի 03/11.2/2442-19 և Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ԼՄ/3328-19 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի (Ակներ բնակավայր)** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Գորիս համայնքի վարչական սահմաններում գտնվող իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից **0.01242 հա** բնակելի կառուցապատման հողեր (կադաստրային ծածկագիր՝ 09-024-0028-0017) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ կապի օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. Տերտերյան

քարտուղար՝



Ռ. Մինասյան